

և զյորդ» ըսելով՝ Եփրատը, որ կը ներկայացնէ «Ասորեստանի թագաւորը և անոր զօրութիւնը»: Սելովամը կոչուած է պարզապէս աղբիւր (Բ. Եգր. Գ. 15), վասն զի Երուսաղէմի միակ աղբիւրն էր. միւսները նշանակուած են քաղաքէն դուրս: Առաջին դարու Հրէաներն ալ միեւնոյն ձևով կը բացատրէին Յովսէպոսի բերնով. «Սելովամը ա՛յն անունն է զոր կու տանք աղբիւրին»: Հրեայ պատմագիրը նոյնիսկ կը զանազանէ «Սելովամը և քաղաքէն դուրս գտնուած աղբիւրները»: Ըստ նոյն պատմիչին, Սելովամը կամ «աղբիւրը» քաղաքին կամ Թրէբէոնի հարաւային ծայրը գտնուելով՝ կը վազէ Տաճարին լեռան և վերի քաղաքին միջև: Պատմիչը այս կերպով կը սահմանէ ջրանցքին բերանը՝ ուրկէ դուրս կ'ելնեն ջուրերը: Բ. Եգր. Գ. 15 համարին մէջ, աւագանի մերձակայ դրան անունը կը կոչուի «աղբիւրի դուռ», անտարակոյս այս դուռն ա՛յն է որ 1897ին Բրոֆ. Blissի հետազօտութեամբ գտնուեցաւ վերի լեռան հարաւ-արեւելեան կողմը: Արարները նոյն տեղը կը կոչեն Այն Սիլուան. միւսն գամայն նոյն անունը կու տան ա՛յն աղբիւրին, ուրկէ ջուրերը կու գան: Յերոնիմոս իր *Uspheh* Աւեսարանի Մեկնութեան մէջ նոյն աղբիւրը կ'անուանէ «Սելովամի աղբիւր», և տեղը ցոյց կու տայ «յոսս Սիոնի լեռան», այսինքն «ի ստորոտս Մօրէայ լեռան»:

2.— Սելովամի ցրմուղը.— Աստուածաշունչը, շատ մը մեկնիչներու և հնարասներու համաձայն, Սելովամի ջուրերուն համար երկու հոսանք կը յիշատակէ.

ա. Բացօթեայ հոսանք մը, որ Կեղրոնէն անցնելով՝ Երուսաղէմի կամ Ուփալի արեւելեան բլուրը կը շրջապատէ:

բ. Միեւնոյն բլուրին ժայռի մը մէջ փորուած անցքը, որ կը տանի նոյն ջուրերը հարաւ-արեւմուտք: Առաջինը ջրմուղի պեղումէն յառաջ է, որուն կ'ակնարկէ Նասայի Սելովամի «խաղաղ ընթացքը» բացատրութեամբ (Ը. 6). երկրորդով կ'ակնարկուի այն աշխատանքին, որով եզեկիա ջանացած է ջուրի այս հոսանքը ծածկել թշնամիներէն: Երկաթի գործիքներով ժայռերը փորուած և ջրմուղը շինուած է Գեհոնի ջուրերը իրենց ընթացքէն դարձնելու համար:

3.— Սելովամի աւազանը.— Բ. Եգր. ԺԳ. 15 և Յովն. Թ. 7. կը յիշատակուի նոյն աւազանը որ ջրանցքէն վազած ջուրերը կը